ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
<ԱՐԶԱԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ> ՓԲԸ

Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Արզական , էլ փոստ՝ arzakan.ambulatory@mail.ru, հեռ. 0226.62331

10 փետրվար 2015 թ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագիր կնքած
կազմակերպությունների ղեկավարներին

Հարգելի գործընկեր

«ԱԲԱ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Արզականի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր մինչև կնքված ՇՀԱՊՁԲ-11/4 շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները (գնման հայտը կցվում է):
Ապրանքների մատակարարման պայմաններն են՝

1. 1-28 չափաբաժիններում ներառված դեղարայքը հիվանդներին պետք է տրամադրվի դեղատնից՝ պատվիրատուի կողմից տրամադրված դեղատոմսերով: Հիվանդների սպասարկումը դեղատնից, դեղատոմսով և պատշաճ մակարդակով իրականացնելու համար պահանջվում է, որ դեղատունը գտնվի <Արզականի Բ.Ա.> ՊՓԲԸ-ից մինչև 1 կմ հեռավորության վրա, ունենա դեղորայքի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ:
2. Հիվանդներին անվճար, 50 % և 30% զեղչով դեղորայքի տրամադրում (դեղատոմսի վրա համապատասխան նշման առկայության դեպքում):
3. 29-59 չափաբաժիններում ներառված դեղարայքը և բնա-ները պետք է տրամադրվի « Արզականի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ, Կոտայքի մարզ, գ. Արզական, Բաբաջանյան 5 հասցեով, ամսեկան կտրվածքով՝ ըստ պատվիրատուի կողմից պատվիրվող քանակների:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել « Արզականի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ-ին, Կոտայքի մարզ, գ. Արզական, Բաբաջանյան 5 հասցեով՝ Լ. Հարությունյանին, մինչև 2015 թ. փետրվարի 17 -ի ժամը 11:00-ը:

Հայտերը կբացվեն Կոտայքի մարզ, գ. Արզական, Բաբաջանյան 5 հասցեում, փետրվարի 17 -ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրենի ժպ՝ Լ. Հարությունյան